



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-02-62,
Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ 05/14.5/4169-20
05 09 2020թ.

**«Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ տիկին Մարինա Պողոսյանին
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4, բնակարան 121**

Հարգելի՛ տիկին Պողոսյան,

2020 թվականի օգոստոսի 26-ին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած Ձեր դիմումին ի պատասխան՝ հայտնում եմ, որ դատապարտյալների դատարան ուղեկցումները չիրականացնելու կապակցությամբ Ձեր դիմումներին ՀՀ ոստիկանության և ՀՀ արդարադատության նախարարության կողմից չպատասխանելու հարցով համապատասխան գրություններ եմ ուղարկել այդ մարմիններ:

Դրա հետ միասին, տեղեկացնում եմ, որ ՀՀ ոստիկանության կողմից դատապարտյալների դատարան ուղեկցումները չիրականացնելու կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են ինչպես բանավոր (ահազանգեր), այնպես էլ գրավոր բողոքներ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկների դատապարտյալներից և նրանց ազգականներից:

Հարկ է համարում արձանագրել, որ Ձեր բարձրացրած խնդիրը՝ կապված դատապարտյալներին դատարան տեղափոխելու գործառույթի իրականացման հետ, ունի համակարգային բնույթ: Այն գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական

ուշադրության կենտրոնում, արտացոլված է ինչպես Պաշտպանի զեկույցներում, այնպես էլ ներկայացված է Կառավարության ուշադրությանը առանձին հաղորդակցությամբ:

Հայտնում եմ նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված անհատական բողոքի քննարկման շրջանակում համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ արդարադատության նախարարություն, որով պարզաբանումներ են պահանջվել դատապարտյալների՝ դատարան տեղափոխումը պատշաճ կազմակերպելու ուղղությամբ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձեռնարկված և ձեռնարկվող քայլերի վերաբերյալ:

Շնորհակալություն համագործակցության համար և բարձրացված կարևոր հարցի համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ